



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2012թ. Տարբեր 7 - ի թիվ 517

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ» ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ
«ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ» ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի մախարարության
«Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության» կանոնադրական գործառույթների
կատարման արդյունավետության գնահատման և «Բժշկասոցիալական փորձաքննության
գործակալությանը» պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, պետական
սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության
արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊ հորիզոնի
2012թ. մարտի 7-ի թիվ 5/7 որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՄԿԻՉ ՊԱԼԱՏ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական-փորձաքննության գործակալության» կանոնադրական գործառույթների կատարման արդյունավետության գնահատման և «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանը» պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2011թ. ապրիլի 30-ի թիվ 15/5 որոշումը:

Վերահսկողության մպատակը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության» (այսուհետ՝ Գործակալություն) կանոնադրական գործառույթների կատարման արդյունավետության գնահատումը, ինչպես նաև՝ Գործակալությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, պետական սեփականության կառավարման և օգտագործման արդյունավետության և ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ուսումնասիրությունը:

Վերահսկողության առարկան՝ Գործակալության կանոնադրական գործառույթների կատարմանը, ինչպես նաև՝ Գործակալությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործմանն ուղղված գործարքներն ու ընթացակարգերը:

Վերահսկողության օբյեկտները՝ Գործակալությունը (տարածքային մարմինները), ինչպես նաև՝ գործընթացին առնչվող սուբյեկտները:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 10.05.2011-30.12.2011թթ.:

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝ 01.01.2008- 01.04.2011թթ.:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման և վերլուծության ձևը: Դիտարկման փուլում իրականացվել է Գործակալությունից, «Նորթ» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ից, ՀՀ աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունից, ՀՀ զինվորական կոմիսարից ստացված տեղեկատվության (տեղեկատվական բազաների) ուսումնասիրություն: Դիտարկման և վերլուծության ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների (քանակական և որակական) և տեղեկատվական բազաների համադրման/համեմատման մեթոդներ, կատարվել է տարբեր փաստաթղթերի և տվյալների ուսումնասիրություն: Վերլուծության փուլում ամփոփվել են դիտարկման արդյունքները:

Վերահսկողության (դիտարկման) ծավալը՝ Վերահսկողության ընթացքում ուսումնասիրվել են Գործակալության կողմից վարվող հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական համակարգը, ինչպես նաև՝ կենսաթոշակառուների «Արաքս» և ընտանեկան նպաստ ստացողների «Նպաստ» տեղեկատվական համակարգերը՝ հաշվառված հաշմանդամների մասով, Գործակալության կողմից հաշմանդամ անձանց վերափորձաքննության գործընթացը, իչպես նաև՝ առավել ռիսկային խմբերում գտնվող անձանց (համապատասխան արտոնություններից օգտվող) հաշմանդամ ճանաչելու գործընթացը:

Վերահսկողության (դիտարկման) արդյունքները՝

Գործակալությունից և «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ից ստացված տեղեկատվության համաձայն, Հայաստանի Հանրապետությունում 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ հաշվառված են 183474 հաշմանդամ, որից 8139-ը՝ հաշմանդամ երեխա (Աղյուսակ 1):


Աղյուսակ 1
Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների թվաքանակը

	2007թ.-ի հունվարի 1- ի դրությամբ	2008թ.-ի հունվարի 1- ի դրությամբ	2009թ.-ի հունվարի 1- ի դրությամբ	2010թ.-ի հունվարի 1- ի դրությամբ	2011թ.-ի վերջին 1- վերջին 1- ի դրությամբ	2011թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ
Հաշմանդամների ընդամենը թվաքանակը, որից՝	148656	158758	170950	179257	185080	183474
իգական սեռ	62542	68004	75054	80169	83941	84894
արական սեռ	86114	90754	95896	99088	101139	98580
մինչև 18 տարեկան («հաշմանդամ երեխա»)	8449	8690	8706	8358	8046	8139
18 տարեկանից բարձր	140207	150068	162244	170899	177034	175335

Հաշմանդամների թվաքանակը, ըստ առանձին հիվանդությունների, ներկայացված է հետևյալ գծապատկերում՝

Դիագրամ 1

Հաշմանդամների թվաքանակը (արտահայտված տոկոսներով) ըստ հիվանդության տեսակների



Տարբեր տեղեկատվական բազաներում հաշմանդամների տվյալների տարբերությունները

Հաշմանդամների վերաբերյալ տվյալներ առկա են սոցիալական ոլորտի մի շարք տեղեկատվական համակարգերում, մասնափոխապես՝ հաշմանդամների հաշվառման «Փյունիկ», կենսաթոշակառուների հաշվառման «Արաքս» և աղքատության «Նպաստ» տեղեկատվական համակարգերում:

Դիտարկման ընթացքում համադրվել են վերը նշված տեղեկատվական համակարգերում առկա հաշմանդամների վերաբերյալ տվյալները: Հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» և կենսաթոշակառուների հաշվառման «Արաքս» տեղեկատվական համակարգերում հաշմանդամների վերաբերյալ տվյալների համադրման արդյունքում արձանագրվել է հետևյալը:

Տվյալ համակարգերում առկա հաշմանդամների թվաքանակները, ինչպես նաև դրանց մասով համապատասխան տարիներում ավելացումներն ու պակասեցումներն էապես տարբերվում են միմյանցից (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

«Փյունիկ»¹ և «Արաքս»² տեղեկատվական բազաների համադրման արդյունքները

Հաշմանդամների թվաքանակը	2008	2009	2010	2011
Հաշմանդամների ընդհանուր թվաքանակը «Փյունիկ» բազայում	157,971	159,817	166,611	172,231
Թվաքանակի աճը նախորդ տարվա համեմատ		20,278	17,365	16,122
Թվաքանակի նվազումը նախորդ տարվա համեմատ		6,928	9,594	10,262
Հաշմանդամների ընդհանուր թվաքանակը «Արաքս» բազայում	146,371	156,981	162,879	168,524
Թվաքանակի աճը նախորդ տարվա համեմատ		21,613	20,163	17,605
Թվաքանակի նվազումը նախորդ տարվա համեմատ		11,019	13,755	11,950

«Փյունիկ» համակարգում հաշվառված են այնպիսի հաշմանդամ անձանց տվյալներ, որոնց վերաբերյալ «Արաքս» համակարգում տվյալներ առկա չեն: Ստացվում է, որ անձը, ստանալով հաշմանդամի կարգավիճակ, ինչ-ինչ պատճառներով չի հաշվառվել որպես կենսաթոշակառու: Գոյություն ունի նաև հակառակ երևույթը. անձինք, որպես հաշմանդամ, հաշվառված են կենսաթոշակառուների «Արաքս համակարգում», սակայն նրանց վերաբերյալ տվյալներ «Փյունիկ» համակարգում առկա չեն, ինչն, ըստ ելույթյան, պետք է բացատրվեր (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

	2008	2009	2010	2011
Հաշմանդամների տվյալներ, որոնք առկա են «Փյունիկում», սակայն բացակայում են «Արաքսում»	24,352	21,975	21,242	20,769
Հաշմանդամների տվյալներ, որոնք առկա են «Արաքսում», սակայն բացակայում են «Փյունիկում»	27,702	22,578	20,471	19,789

Տարբերություններ առկա են նաև վերջին տարիներին տվյալ համակարգերում հաշվառված (ավելացված) և հաշվառումից հանված (պակասեցված) հաշմանդամների տվյալներում՝ յուրաքանչյուր տարվա մասով (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

¹ «Նորք» ՏՎԿ ՓԲԸ-ում հաշմանդամների տեղեկատվական բազա, որոնց տվյալները ստացվում են Գործակալությունից (ԲՍՓՀ-ներից):

² ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության հաշմանդամների տեղեկատվական բազա

	2008	2009	2010	2011
Տվյալ տարվա ընթացքում հաշվառվել են (ավելացել) «Փյունիկում», սակայն չեն հաշվառվել «Արաքսում»		3,364	2,817	2,656
Տվյալ տարվա ընթացքում հաշվառվել են (ավելացել) «Արաքսում», սակայն չեն հաշվառվել «Փյունիկում»		4,701	5,614	4,138
Տվյալ տարվա ընթացքում հաշվառումից հանվել են «Փյունիկից», սակայն առկա չեն «Արաքսից» հաշվառումից հանվածներում		4,906	2,468	3,204
Տվյալ տարվա ընթացքում հաշվառումից հանվել են «Արաքսից», սակայն առկա չեն «Փյունիկից» հաշվառումից հանվածներում		8,997	6,629	4,893

«Նպաստ», «Փյունիկ» և «Արաքս» տեղեկատվական համակարգերում հաշմանդամների տվյալների համադրման արդյունքում ստացվեց, որ «Նպաստ» համակարգում ներառված են հաշմանդամներ, որոնք հաշվառված չեն «Արաքս» և «Փյունիկ» համակարգերում: Մասնավորապես, «Նպաստ» համակարգում առկա են նպաստառու հաշմանդամներ, որոնք ընդգրկված չեն «Փյունիկ» համակարգում (4938 անձ) կամ «Արաքս» համակարգում (2060 անձ):

Վերը նշված անհամապատասխանություններից կարելի է եզրակացնել, որ սոցիալական ոլորտում առկա տեղեկատվական համակարգերում հաշմանդամների տվյալներն էապես տարբերվում են միմյանցից, ինչը կարող է հնարավորություններ ստեղծել տարբեր տեսակի չարաչափումների: Նման եզրակացության Վերահսկիչ պալատը հանգել էր նաև «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ում իրականացրած ուսումնասիրության արդյունքում:

**Գործակալության կողմից հսկողական կարգով իրականացվող
փորձաքննությունների արդյունքներ**

Գիտարկման արդյունքում պարզվել է, որ Գործակալության կողմից պարբերաբար հսկողական կարգով կատարվում են լրացուցիչ փորձաքննություններ (վերափորձաքննություններ), որոնց արդյունքում փոփոխվում և/կամ վերացվում է անձի հաշմանդամությունը: Վերափորձաքննություններն իրականացվում են Գործակալության փորձաքննությունների մասնագիտական բաժնի կողմից:

Վերոնշյալ հարցն ուսումնասիրելու նպատակով Գործակալությունից պահանջվել է տեղեկատվություն՝ ըստ տարածքային ԲՍՓՀ³-ների, ինչի վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2008-2011թթ.-ին Գործակալության կողմից հսկողական կարգով վերափորձաքննվել են 594 անձի: Արդյունքում՝ 298 անձի մասով հաշմանդամության խումբը փոփոխվել է և/կամ վերացվել է հաշմանդամությունը (Աղյուսակ 5, մանրամասն ըստ առանձին ԲՍՓՀ-ների՝ հավելված 1-ում):

³ Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով

Հսկողական կարգով փորձաքննության արդյունքները՝ ըստ տարիների

Խմբերի փոփոխություն	2008	2009	2010	2011
Հաշմանդամության 2-րդ խումբ, որը վերացվել է	2	-	3	8
Հաշմանդամության 3-րդ խումբ, որը վերացվել է	5	13	27	11
Հաշմանդամության 1-ին խումբը դարձել է 2-րդ	-	1	2	4
Հաշմանդամության 2-րդ խումբը դարձել է 1-ին	-	-	2	-
Հաշմանդամության 2-րդ խումբը դարձել է 3-րդ	13	16	45	77
Հաշմանդամության 3-րդ խումբը դարձել է 2-րդ	1	1	4	3
Ժամկետի փոփոխություն	-	2	20	5
Պատճառական կապ	4	3	1	1
Եղել է «Հաշմանդամ երեխա», որը վերացվել է	2	17	5	-
Ընդամենը փոփոխված	27	53	109	109
Ընդամենը հսկողական կարգով վերափորձաքննված անձիք	53	115	243	183

Հատկանշական է, որ մի շարք դեպքերում վերը նշված անձանց հաշմանդամ ճանաչելու համար անհրաժեշտ է եղել Գործակալության փորձաքննությունների բաժնի եզրակացությունը: Ստացվում է, որ Գործակալությունը կասկածի տակ է դնում ոչ միայն տարածքային հանձնաժողովների որոշումները, այլ նաև՝ իր իսկ եզրակացությունը: Ստացվում է, որ տարածքային ԲՄՓՀ-ների սխալի հետևանքով (երբեմն Գործակալության համապատասխան բաժնի եզրակացության ասկայությամբ) հաշմանդամ չհանդիսացող անձին տրվում է հաշմանդամի կարգավիճակ, որի արդյունքում վերջինս պետության կողմից ստանում է հաշմանդամության կենսաթոշակ, օգտվում է որոշակի արտոնություններից: Տվյալ արտոնություններն իրենց հերթին կարող են խթան հանդիսանալ հաշմանդամի կարգավիճակ ձեռքբերելու համար:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված որոշ արտոնություններ (ոչխկային)

ՀՀ օրենսդրությամբ հաշմանդամների համար նախատեսված են մի շարք արտոնություններ: Դիտարկման փուլում ուսումնասիրվել են հետևյալ արտոնությունները.

1. «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող գորամասում ծառայելու արտոնությունից օգտվում է երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը:
2. Նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում տրվում է այն գորակոչիկին, որն ունի անաշխատունակ (այդ թվում՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ) հայր և մայր կամ միայնակ անաշխատունակ հայր կամ մայր, եթե նրանք չունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի համարվող աշխատունակ, պարտադիր զինվորական ծառայության մեջ չգտնվող այլ զավակ, ինչպես նաև մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ հարազատ քույր կամ եղբայր, եթե չկա նրա հետ բնակվող ընտանիքի անդամ համարվող աշխատունակ այլ անձ: Այս արտոնությունների կիրառման հետ կապված ՀՀ զինվորական կոմիսարից պահանջվել է 2008-2011 թվականներին տվյալ արտոնություններից օգտվող անձանց տվյալները:

3. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

- ա) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները և հաշմանդամ երեխաներն ըստ դեղատոմսերի ապահովվում են դեղորայքով անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից:
- բ) Ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներն և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար նվազագույն անցումային միավորներ հավաքելու դեպքում:

Արտոնություններ նախատեսված են նաև այլ ոլորտները կարգավորող օրենսդրությամբ:

Վերականգնողական անհատական ծրագրերի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով հաշմանդամների բժշկական, մասնագիտական

և սոցիալական վերականգնումն իրականացվում է վերականգնողական անհատական ծրագրով, որը համապատասխան մարմինների կողմից ենթակա է պարտադիր կատարման: Վերականգնողական անհատական ծրագիրն իրագործվում է սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջոցով: ՀՀ կառավարության 02.03.06թ. թիվ 276-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, ամձին հաշմանդամ ճանաչելու դեպքում ԲՍՓՀ-ի կողմից նույն օրը կազմվում է վերականգնողական անհատական ծրագիր: Վերականգնողական անհատական ծրագիրը 10-օրյա ժամկետում ուղարկվում է համապատասխան սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն:

Ըստ Գործակալության կողմից ներկայացված պարզաբանման՝ սոցիալական ծառայությունների տարածքային մարմինները վերականգնողական անհատական ծրագրերը ԲՍՓՀ-ներից ընդունում են մեծ դժվարությամբ և կուտակում իրենց կենտրոններում, իսկ երբեմն էլ հրաժարվում են դրանք ընդունելուց: Գործակալության կողմից լրացված ծրագրերի քանակը ներկայացված է ստորև աղյուսակում՝

Աղյուսակ 6

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Լրացված վերականգնողական անհատական ծրագրերի քանակը	68455	70694	70135	70316

Նույն օրենքի 7¹ հոդվածի համաձայն, հաշմանդամների վերականգնումը ներառում է բժշկական, մասնագիտական և սոցիալական միջոցառումներ, որոնք ուղղված են հաշմանդամի կենսագործունեության սահմանափակման վերացմանը կամ հնարավորինս փոխհատուցմանը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների նման վարքագիծը *կարող է չնպաստել հաշմանդամների կենսագործունեության սահմանափակման վերացմանը և նրանց քվարանակի նվազմանը:*

Եզրակացություն

1. Սոցիալական ոլորտում առկա տեղեկատվական համակարգերում հաշմանդամների տվյալներն էապես տարբերվում են միմյանցից, ինչը կարող է հնարավորություններ ստեղծել տարբեր տեսակի չարաշահումների: ՀՀ վերահսկիչ պալատը նման եզրակացության էր ներկայացրել մաս «Նորք տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացված վերահսկողության արդյունքում:

2. Տարածքային ԲՄՓՀ-ները երբեմն անձանց հաշմանդամ ճանաչելու մասով կայացնում են ոչ ճիշտ որոշումներ, ինչի մասին վկայում են Գործակալության կողմից իրականացվող վերափորձաքննության արդյունքները:
3. Տարածքային ԲՄՓՀ-ների կողմից առողջական վիճակի ոչ ճիշտ գնահատման արդյունքում հաշմանդամ չհանդիսացող անձին տրվում է հաշմանդամի կարգավիճակ, որի արդյունքում վերջինս պետության կողմից ստանում է հաշմանդամության կենսաթոշակ, ընտանեկան նպաստ, օգտվում է որոշակի արտոնություններից, որոնք էլ իրենց հերթին կարող են պատճառ հանդիսանալ հաշմանդամի կարգավիճակ ստանալու համար:
4. Հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգերում առկա անհամապատասխանությունների պատճառների և դրանց բացառման ուղղությունների բացահայտման, ինչպես նաև առավել ռիսկային խմբերում (արտոնություններից օգտվող) գտնվող հաշմանդամների մասով կայացրած որոշումների օբյեկտիվությունը պարզելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մանրամասն ուսումնասիրություններ՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ:
5. Հաշմանդամների համար վերականգնողական անհատական ծրագրերի նկատմամբ անհետևողական վերաբերմունքը կարող է հանգեցնել հաշմանդամների թվաքանակի աճի:

Առաջարկություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝

Հաշվի առնելով, որ սոցիալական ոլորտի տարբեր տեղեկատվական համակարգերում հաշմանդամների վերաբերյալ տվյալներն էապես տարբերվում են, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ տարբեր տեղեկատվական բազաներում հաշմանդամների տվյալները ճշտելու/համապատասխանեցնելու ուղղությամբ:

Հսկողական կարգով փորձաքննության արդյունքները ըստ տարիների								
ԲՄՓՀ	2008		2009		2010		2011	
	փոփոխված	հաշ. չճանաչված	փոփոխված	հաշ. չճանաչված	փոփոխված	հաշ. չճանաչված	փոփոխված	հաշ. չճանաչված
Երևանի N1	-	-	3	4	-	-	3	-
Երևանի N2	2	-	2	5	-	-	4	2
Երևանի N3	1	-	3	-	12	-	4	-
Երևանի N4	-	-	1	-	-	-	5	-
Երևանի N5	-	-	2	1	2	1	-	-
Երևանի N6	1	-	1	-	1	2	4	-
Կոտայք	3	-	-	-	2	1	2	1
Արագածոտն	-	-	1	-	-	-	5	1
Արարատ N1	1	-	-	-	-	-	2	1
Արարատ N2	2	2	-	-	-	-	2	2
Արմավիր	5	-	-	-	6	5	8	2
Շիրակի N1	1	-	2	1	-	-	12	2
Շիրակի N2	1	-	1	1	3	2	4	2
Լոռի N1	-	1	-	-	7	-	2	-
Լոռի N2	-	4	1	-	4	5	5	1
Լոռի N3	-	-	5	-	10	4	1	-
Գեղարքունիք N1	-	-	6	-	-	-	6	3
Գեղարքունիք N2	-	-	-	-	3	4	8	-
Սյունիքի N1	-	-	-	1	6	1	3	-
Սյունիքի N2	-	-	1	-	3	1	5	2
Վայոց Ձոր	1	-	1	-	-	-	1	-
Տավուշ	-	-	1	-	-	-	2	-
Այնարաճական	-	-	-	-	-	-	-	-
Հոգերուժական	-	-	3	-	6	1	2	-
Մանկական	2	-	6	-	17	-	-	-
Ընդամենը փոփոխված	20	7	40	13	82	27	90	19



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

« _____ » 2012 թ.

N _____

Ձե՛ր 2012թ. մարտի 22- N 02/23.14/3964-12

**ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար պարոն Դ. Մարգարյանին**

Հարգելի պարոն Մարգարյան,

Համաձայն ՀՀ վարչապետի 2008թ. մայիսի 4-ի N 225-Ա որոշման 2-րդ կետի՝ Ձեզ է ուղարկվում ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012թ. մարտի 7-ի N5/7 որոշմամբ հաստատված «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության» կանոնադրական գործառույթների կատարման արդյունավետության գնահատման և «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանը» պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ հաշվետվության N 5/8 որոշմամբ հաստատված ««Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից վճարվող ՀՀ պետական բյուջեով նախատեսված սոցիալական վճարների նշանակման և վճարման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ հաշվետվության վերաբերյալ առարկություններն ու բացատրությունները:

Առդիր՝ 12 էջ:

Հարգանքներով՝

Ա. Գրիգորյան

կատ. Մ. Վանյան
հեռ. 650601

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012թ. մարտի 7-ի N5/7 որոշմամբ հաստատված «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության» կանոնադրական գործառույթների կատարման արդյունավետության գնահատման և «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանը» պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ» ընթացիկ հաշվետվության մասին

ՀՀ ԲՍՓ գործակալությունը ունի հսկողական գործառույթ վերադասության կարգով վերանայելու տարածքային մարմինների որոշումները: Հնարավոր չէ որոշման կայացման պահին հսկողություն իրականացնել ողջ տարածքներում, ուստի պարբերաբար ուսումնասիրվում են ԲՍՓ գործերը, անհրաժեշտության դեպքում ներկայացվում է զեկուցագիր, որի հիման վրա գործակալության պետի կողմից տրվում է համապատասխան հանձնարարական: Նշված գործընթացը նման է ներքին աուդիտի, որը բարձրացնում է տարածքային մարմիններում զգոնությունը և փորձաքննության որակը, քանի որ ԲՍՓ գործակալության փորձաքննական բաժնում աշխատում են ավելի բարձր որակավորման փորձագետ-մասնագետներ, ինչպես նաև այնպիսի նեղ մասնագետներ, որոնք տարածքային մարմիններում չկան (հոգեբույժ, ակնաբույժ, պալարախտաբան):

ՀՀ-ում չկան բժշկասոցիալական փորձաքննության ոլորտի փորձագետների պատրաստման կամ վերապատրաստման ուսումնական հաստատություններ, ուստի, որպես ԲՍՓ ոլորտի մասնագետ առողջապահության համակարգից նոր մասնագիտությամբ աշխատող բժիշկները կայանում են միայն աշխատանքային գործունեության ընթացքում որի արդյունքում նրանց աշխատանքի սկզբնական շրջանում հնարավոր են բացթողումներ, անձի օրգանիզմի ֆունկցիաների և դրանց հետևանքով կենսագործունեության տեսակների և աստիճանների սխալ գնահատման դեպքեր: Մինչ այժմ հնարավոր է եղել Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի բժիշկ-փորձագետների վերապատրաստման ինստիտուտներում վերապատրաստել ընդամենը 13 բժիշկի, այն էլ միջազգային կազմակերպությունների միջոցներով:

Սոցիալական ոլորտի տեղեկատվական համակարգերում հաշմանդամների տվյալներն իրարից տարբերվում են ոչ միայն ԲՍՓ գործակալության, այլ նաև կենսաթոշակային համակարգի, ինչպես նաև <<Նորք>> ՏՎԿ-ի պատճառով, սակայն դրանք չարաշահման պատճառ չեն կարող հանդիսանալ: Օրինակ՝ կենսաթոշակային տարիքի հաշմանդամ ճանաչված անձիք ստանում են տարիքային կենսաթոշակ, որի կապակցությամբ չեն ձևակերպում հաշմանդամության կենսաթոշակը, իսկ կենսաթաշակային մարմիններում հավանական է տվյալ անձի տեղեկատվական բազայում չեն գրանցում ԲՍՓ-ներից ստացված քաղվածքների տվյալները՝ անձին հաշմանդամ ճանաչելու մասին:

1. Համաձայն ՀՀ կառավարության 14.11.2002թ N 1822-Ն որոշման հավելված 1-ի 8-րդ կետի «գ» ենթակետի՝ ՀՀ ԲՍՓ գործակալությունը մասնակցում է բժշկասոցիալական փորձաքննություն անցած հաշմանդամների տվյալների շտեմարանի ստեղծմանը: Հետևաբար, գործակալությունը միայն մասնակցում է շտեմարանի ստեղծմանը, այլ ոչ թե ինքն է ստեղծում, և չունի դրա սպասարկման կամ շահագործման գործառույթ: 2011 թվականի օգոստոսից մինչև դեկտեմբեր ամիսը գործակալությունում իրականացվել է գույքագրում, որի արդյունքում հստակեցվել է շտեմարանը: Ներկայումս հաշմանդամների շտեմարանում հստակ են գործակալության

ստեղծումից (2002թ) հետո ընկած ժամանակահատվածի հաշմանդամների տվյալները:

2. ՀՀ ԲՄՓ գործակալության կողմից 2008-2011թթ ընդհանուր առմամբ իրականացվել է 286625 փորձաքննություն, հսկողական վերափորձաքննության արդյունքում փոփոխվել է 232 որոշում, որը կազմում է ընդհանուր թվի 0,08 %-ը: Նշված ցածր տոկոսը էական փոփոխությունների չի բերում, սակայն բարձրացնում է պատասխանատվությունը կատարած աշխատանքի նկատմամբ, նպաստում է միասնական մոտեցման ձևավորմանը բժշկասոցիալական փորձաքննության մեջ:
3. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար գոյություն ունի մեկ գերխնդիր՝ ՀՀ-ում գործող չափանիշներին համապատասխան հաշմանդամության սահմանում: ԲՄՓՀ-ների համար <ռիսկային> խմբեր կամ <արտոնություններից օգտվողներ> չկան, հանձնաժողովը չի կարող կանխորոշել հաշմանդամության սահմանման վերաբերյալ անձին տրվող տեղեկանքի հետագա ճակատագիրը: Ջորակոչային տարիքի երեխաներ ունեցող անձիք հանձնաժողովում փորձաքննության ժամանակ հաճախ ներկայացնում են փաստաթղթեր, որ միայնակ են, զավակներ չունեն, կամ փորձաքննության պահին երեխայի տարիքը զորակոչային չէ, կամ ամուսինները ամուսնալուծված չեն, հետագայում իրենց կարգավիճակի փոփոխության ժամանակ հաշմանդամության խմբի տեղեկանքը ներկայացվել է զինկոմիսարիատ՝ արտոնությունից օգտվելու նպատակով, այս բոլորը փաստագրվեց 2011թ. իրականացված վերափորձաքննությունների արդյունքում:
4. Համաձայն <<Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ հաշմանդամների բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնումն իրականացվում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի հաստատած, հաշմանդամների վերականգնողական բազային ծրագրին համապատասխան մշակած վերականգնողական անհատական ծրագրով: Վերականգնողական անհատական ծրագիրը իրագործվում է սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների միջոցով, վերականգնողական անհատական ծրագրի իրագործումը համակարգում է լիազորված մարմինը: Այսինքն՝ ԲՄՓ գործակալությունը ՎԱԾ-ը կազմում, հաստատում և տրամադրում է սոցիալական ծառայություններին տարածքային կենտրոններին, իսկ գործակալությունը գործառույթ չունի կապված ՎԱԾ-ի իրականացման կամ հսկման հետ, ինչպես նաև չկա հետադարձ կապ:



ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ վերահսկիչ պալատի 2011 թվականի մարտի 7-ի թիվ 5/7 որոշմամբ հաստատված՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալության» կանոնադրական գործառույթների կատարման արդյունավետության գնահատան և «Բժշկասոցիալական փորձաքննության գործակալությանը» պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունում ամրագրված՝ հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ

Բժշկասոցիալական փորձաքննության գործընթացն առավել թափանցիկ, վերահսկելի դարձնելու նպատակով ձեռնարկվել են օպերատիվ և համակարգային միջոցառումներ: Աշխատանքից ազատվել են ՀՀ ԲՄՓ գործակալության պետը, թվով 8 ԲՄՓՀ-ի նախագահ, 4 բժիշկ-փորձագետ և 1 բուժվիճակագիր: Իրականացվել են ԲՄՓ հանձնաժողովների սպասարկման տարածքների փոփոխություններ:

2012 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունվել են ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 780-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1592-Ն, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N1821-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N1631-Ն, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1822-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N1632-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N276-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1633-Ն որոշումները, որոնք հնարավորություն են տալիս առավել վերահսկելի դարձնել ԲՄՓ գործակալության, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային մարմինների աշխատանքը, հստակեցնել հաշմանդամության սահմանման և փորձաքննության ժամանակ օգտագործվող չափանիշների կիրարկման գործընթացը: Մասնավորապես՝ ԲՄՓ գործակալությունում ստեղծվել են իրավական ապահովման, տեղեկատվական-վերլուծական, ինչպես նաև վերափորձաքննության բաժիններ: Առաջին անգամ փորձաքննվող անձանց բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հանձնաժողովի նիստին կմասնակցեն ՀՀ առողջապահության նախարարության մասնագետներ և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Փոփոխություններ են նախատեսվել նաև բժշկասոցիալական փորձաքննության որոշումը բողոքարկելու կարգում, ինչը կբարձրացնի համակարգի նկատմամբ վստահությունը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող համապատասխան ստորաբաժանմանումը կհամալրվի փորձագետների խմբով, որը վերադասության կարգով կփորձաքննի ԲՄՓ գործակալության որոշումը բողոքարկող անձանց գործերը և կտա համապատասխան եզրակացություն: Առանձին դեպքերում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ առողջապահության նախարարների համատեղ հրամանով կարող է ձևավորվել մասնագետների խումբ, որը գործի ուսումնասիրության արդյունքում տալիս է փորձագիտական եզրակացություն: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, հիմք ընդունելով մասնագետների խմբի փորձագիտական եզրակացությունը, արձակում է հրաման:

ԲՄՓ հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննությունների ժամանակացույցը և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ցանկը առաջիկայում տեղադրվելու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքում:

Հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» և կենսաթոշակառուների «Արաքս» տեղեկատվական համակարգերում առկա անճշտությունները կարգավորելու նպատակով՝ 2011 և

2012 թվականների ընթացքում «Նորք» ՏՎԿ-ի կողմից պարբերաբար կատարվել են նշված տեղեկատվական շտեմարանների համադրումներ, արդյունքները տրամադրվել ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությանը և ԲՍՓ գործակալությանը՝ անհամապատասխանությունները ճշտելու նպատակով:

Սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային մարմինների և բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների կողմից ճշտումներ կատարելու արդյունքում 2011թ. ապրիլ ամսից մինչև 2012թ. ապրիլ ամիսը հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական շտեմարանում չհայտնաբերված հաշմանդամ կենսաթոշակատուների թիվը 22762-ից նվազել է մինչև 8624:

Այնուհետև, հաշմանդամների հաշվառման համակարգում չհայտնաբերված 8624 կենսաթոշակատուների տվյալները տեղադրվել են հաշմանդամների հաշվառման համակարգում՝ առանձին «կենսաթոշակ» բաժնում: ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունից թղթային տարբերակով ստացվել են ԲՍՓՀ-ների կողմից հաշմանդամներին տրամադրված տեղեկանքներ, ինչի արդյունքում հայտնաբերվել են 4792 անձանց տվյալներ: Անձի տվյալները, հասցեն, հաշմանդամության խումբը, ժամկետը, պատճառական կապը և կենսաթոշակի տեսակը տեղադրվել են կենսաթոշակատուների ՏԲ-ից: Վարչական վարույթի բացման վերաբերյալ մնացած տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է ԲՍՓՀ-ների կողմից: Մնացած 3832 անձանց տվյալները ճշտելու նպատակով հաշմանդամների հաշվառման ՏՀ-ի «կենսաթոշակ» բաժնում կատարվել է ծրագրային փոփոխություն, ըստ որի յուրաքանչյուր ԲՍՓՀ-ի համար հասանելի է դարձել այդ բաժնում «Նորք» ՏՎԿ-ի կողմից մուտքագրված՝ իր մարզը սպասարկող ԲՍՓՀ-ների տեղեկատվությունը, ընդ որում վարույթի մուտքագրումն իրականացնելու պահին համապատասխան տարածքային մարմնի անվանումն ընտրվում է ինքնաշխատ եղանակով: Այժմ մնացել են 2962 անձանց տվյալներ, որոնց գործերը որևէ ԲՍՓՀ-ի կողմից մուտքագրված չեն, այսինքն՝ այդ անձինք հաշմանդամ չեն համարվում:

Պետական կենսաթոշակային համակարգի «Էլեկտրոնային կենսաթոշակ» տվյալների շտեմարանի շրջանակներում նախատեսվում է հաշմանդամության վերաբերյալ տվյալները մուտքագրել ինքնաշխատ եղանակով՝ «Փյունիկ» տեղեկատվական համակարգից՝ ապահովելով անձի հաշմանդամության վերաբերյալ տեղեկատվության նույնականությունը: